

Մ-79

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՀԱՐ ԺՈՐԱՅԻ ՄԵԻԹԱՐՅԱՆ

ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայրենական ատենախոսության

*Դուրյան Գրիգորի
Սեդրաչյան Բ. Անդրանիկյան*

Գրիգոր

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պ. գ. դ. Պ. Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ. գ. դ., պրոֆ. Վ. Ա. Բայրուրյան
պ. գ. թ. Բ. Պ. Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն՝


Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 8-ին, ժ. 15:00 ՀՀ
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006
“Համաշխարհային պատմություն” մասնագիտական խորհրդի նիստում
(հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրը առաքված է 2015 թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գլխաքարտուղար



պ. գ. թ., դոցենտ
Ռ. Պ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական
կայսրության XVIII դ. երկրորդ կեսի հարաբերությունների պատմության
ուսումնասիրությունը կարևոր գիտական նշանակություն ունի Ռուսաստանի
արտաքին քաղաքականության մեջ այսրկովկասյան ուղղության պատմական,
աշխարհաքաղաքական, տնտեսական գործընթացների առավել խոր և
համակողմանի ընկալման և ժամանակակից խեղաթյուրումների բացահայտման
տեսանկյունից:

XVIII դ. երկրորդ կեսին Այսրկովկասը, մասնավորապես նրա հյուսիս-
արևելյան հատվածը, վերածվել էր ռուս-իրանա-օսմանյան ռազմաքաղաքական
շահերի բախման թատերաբեմի: Նաղիր շահի մահից (1747 թ.) հետո նրա
ստեղծած պետությունը տրոհվել էր կիսանկախ և ինքնուրույնության ձգտող
պետական միավորների խանությունների: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի
խանությունները ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու
հնարավորություն էին ձեռք բերել: Նրանք ստիպված էին իրենց
անվտանգությունն ու ինքնուրույնությունը պահպանել դիմելով Իրանի
տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսանավելու
քաղաքականությանը:

Թեմայի ուսումնասիրությունը փաստում է, որ ադրբեջանական
պատմագիտության հայեցակարգը, համաձայն որի XVIII դ. երկրորդ կեսին
Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների միջև ավատատիրական
պայքարը դիտարկվում էր որպես «Հյուսիս-արևելյան Ադրբեջանի» հողերի իբրև
թե քաղաքական մեկ կենտրոնի շուրջը միավորման գործընթաց¹, իսկ «Ղուբայի
խանություն» եզրույթը փոխարինվում էր «Հյուսիս-արևելյան Ադրբեջանի
պետություն»-ով², որը չի համապատասխանում պատմական իրականությանը:

Տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի քննությունը արժևորում է
թեմայի արդիականությունն ու հրատապությունը արևելակովկասյան
ժողովուրդների, մասնավորապես լեզգիների և լեզգիախոս ժողովուրդների
էթնոքաղաքական պատմության ուսումնասիրության համար:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների XVIII դ. երկրորդ կեսի
ներքաղաքական զարգացումների հետազոտությունը արդիական է
խանությունների հայ բնակչության սոցիալ-իրավական կարգավիճակի
ուսումնասիրության առումով ընդգծելով թեմայի կարևորությունը նաև
հայագիտության համար:

Ատենախոսության թեմայի համակողմանի վերլուծությունն արդիական է
Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ծավալվող գործընթացների, մասնավորապես

¹ Г. Абдуллаев, Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965, с. 4.

² Նույն տեղում, էջ 5:

Ռուսական պետության և Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների ռազմա-քաղաքական շահերի լուսաբանման և ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումները ճիշտ գնահատելու համար:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ռուսմասիքության նպատակն է հետազոտել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը խնդիր ունի.

- Հետազոտել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների ձևավորման գործընթացը:

- Ներկայացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների էթնոքաղաքական պատկերը:

- Ուսումնասիրել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում հայ ազգաբնակչության սոցիալ-իրավական դրությունը:

- Վերլուծել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում իրականացվող դրամահատության պատմագիտական նշանակությունը:

- Լուսաբանել և քննության ենթարկել խանությունների քաղաքական ռազմավարությունը Իրանի տերության, Օսմանյան և Ռուսական կայսրությունների նկատմամբ:

- Քննել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների շրջափուլերը:

- Լուսաբանել Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ռուսաստանին հակազդելու խնդրում Իրանի տերության և Օսմանյան կայսրության քաղաքականությունը խանությունների նկատմամբ:

- Վերլուծել Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականությունը ռուս-իրանական և ռուս-թուրքական ռազմաքաղաքական, առնտրա-տնտեսական շահերի համատեքստում:

- Վերլուծել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական դիրքորոշումը ռուս-իրանական հակամարտության խնդրում:

Ատենախոսության գիտական նորույթը

- Ատենախոսության մեջ նորովի է գնահատվում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունների պատմությունը և ամբողջական վերլուծության են ենթարկվում XVIII դ. երկրորդ կեսին խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունների զարգացման դինամիկան և շրջափուլերը:

- Աղբյուրագիտական նյութի վերլուծության հենքի վրա բացահայտվել են Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության երկկողմանի համագործակցությունը պայմանավորող տարածաշրջանային գործոնները: Մասնավորապես պարզվում է, որ 1750-1770-ական թթ. Ռուսական պետությունը, ի տարբերություն Պետրոս Ա-ի որդեգրած քաղաքական ուղենիշի,

առժամանակ հրաժարվում է տարածաշրջանում ռազմական միջամտություն կատարելուց, ռազմաքաղաքական ներկայությունը փոխարինում է քաղաքական ազդեցության հաստատմամբ և միջամտում ներքաղաքական զարգացումներին՝ խաների և այսրկովկասյան մյուս տիրակալների շահերը համադրելով կամ հակադրելով միմյանց: Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ռուսական կայսրության դիվանագիտական միջամտության այս քաղաքականությունը 1780-ական թթ. վերածվում էր հայեցակարգի՝ հակակշիռների ստեղծման մեխանիզմի՝ Չերակլ Բ արքայի և Ղուբայի Ֆաթի Ալի խանի նկատմամբ՝ թույլ չտալով տարածաշրջանում միաբնեռ ուժի ի հայտ գալը:

- Բացահայտվում է Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների արտաքին քաղաքականության հիմնական ուղղության խուսանավելու հայեցակարգի ձևավորման գործընթացը: Վերլուծությունը պարզել է, որ 1750-1780-ական թթ. խաների վարած խուսանավելու քաղաքականությունը արդարացնում էր իրեն, քանի որ թե՛ Իրանի տերությունը, թե՛ Օսմանյան և Ռուսական կայսրությունները բավարար դիվանագիտական և ռազմաքաղաքական ներուժ չունենալու պատճառով Այսրկովկասում «գործում էին» չեզոքության բողի տակ բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան: Աղա Մուհամմադ խանի 1795 թ. Այսրկովկաս կատարած արշավանքից հետո խանությունների խուսանավելու քաղաքականությունը կորցրել էր կենսունակությունը՝ խանություններին վերադարձնելով Իրանի տերության կազմը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները

Ատենախոսության ուսումնասիրության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են XVIII դ. երկրորդ կեսը, ավելի ստույգ՝ 1747-1796 թթ.: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է Հյուսիս-արևելյան Այսրկովկասում նշված ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական իրադարձություններով, որոնց հետևանքով խանությունները կիսանկախ քաղաքական կարգավիճակ ձեռք բերեցին՝ ինքնուրույն հարաբերություններ հաստատելով Ռուսական պետության հետ:

Ատենախոսության մեթոդաբանական հենքը

Մեր ուսումնասիրության հիմքում ընկած են սկզբնաղբյուրների քննական վերլուծության և պատմական փաստերի համեմատական համադրման մեթոդները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսության դրույթները կարևոր են ինչպես XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի պատմության առանձին հիմնահարցերի ուսումնասիրության, այնպես էլ ժամանակակից փուլում տարածաշրջանում ծավալվող աշխարհաքաղաքական զարգացումների վերլուծության և լուսաբանման համար:

Արված եզրակացությունները կարող են հիմք դառնալ ինչպես՝ նոր, էլ ավելի խորը հետազոտությունների, այնպես էլ ընդհանրացնող կովկասագիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների շարադրման համար:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսարանվել են հեղինակի հրապարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի կողմից:

Աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսական հետազոտության ժամանակ օգտագործվել է աղբյուրագիտական հարուստ բազա, ինչը հնարավորություն է ստեղծել համակողմանի ուսումնասիրել թեման: Հետազոտության սկզբնաղբյուրներ են ծառայել արխիվային նյութերը՝ անտիպ փաստաթղթեր, վավերագրեր և ձեռագրեր, ինչպես նաև տպագիր սկզբնաղբյուրները: Արխիվային սկզբնաղբյուրները վեր են հանվել Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) ձեռագրական և արխիվային հավաքածուներից, Կաթողիկոսական դիվանի հայերեն և ռուսերեն վավերագրերից, ՌԴ արխիվային ֆոնդերից կատարված լուսապատճեններից:

Տպագիր սկզբնաղբյուրներից հետազոտության համար բացառիկ արժեք է ներկայացնում Ս. Գմելինի ուսումնասիրությունը³, որն անձամբ է եղել տարածաշրջանում և արժեքավոր դիտարկումներ կատարել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության ու էթնիկ պատկերի վերաբերյալ:

XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի առևտրա-տնտեսական և քաղաքական պատմության մի շարք հիմնահարցերի մասին ժամանակակից ակնառուների վկայություններ են հանդիսանում անգլիացի Ջ. Հենվեյի, Ֆ. Սոյմոնովի և Ս. Չուկովի, եվրոպացի ճանապարհորդներ ու հետազոտողներ Ջ. Բելի, Ջ. Կուկի, Վ. Քոքսի, Ջ. Ֆորստերի և այլոց աշխատություններում⁴:

³ С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, часть III/1 половина, СПб., 1785.

⁴ J. Hanway, An historical Account of the British Trade over the Caspian Sea: with the author's journal of Travels from England through Russia into Persia and back through Russia, Germany and Holland, col. I, London, 1753; Ф. Соймовов, О торгах за Каспийское море древних средних и новейших времен, СПб., 1765; նույնի՝ Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, СПб., 1763; М. Чулков, Историческое описание российского коммерции при всех портах и границах от древних времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по оной государя императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой, т. II, кн. II, 1785; J. Bell, Travels from St. Petersburg in Russia, to various parts of Asia. A new edition, at one volume, Edinburgh, 1806; J. Cook, Voyages and travels through the Russian Empire, Tartary and Part of Kingdom of Persia, Vol. II, Edinburgh, 1770; W. Coxe, Travels in Poland, Russia, Sweden and Denmark, the fifth edition, col. III, London, 1802; J. Forster, A Journey from Bengal to England, London, through the northern part of India, Kashmir, Afghanistan, and Persia, and into Caspian-sea, col. II, London, 1798: Հմմ. Ս. Ջուլայան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք

XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի և նրան հարակից իրանական տարածքների խանությունների քաղաքական պատմության լուսարանում արժեք են բերում Արևելյան Վրաստանում 1783-1787 թթ. հաստատված ռուսական լիազոր ներկայացուցիչ գնդապետ Ս. Բուրնաշևի⁵, Հերակլ Բ և Սողոմոն Ա արքաների մոտ գտնվող (1782-1783 թթ.) գերմանացի բժիշկ Յ. Ռայնեգսի և Ս. Բիբերշտայնի աշխատությունները⁶:

Ատենախոսության մեջ ընդգրկված ժամանակաշրջանի Կովկասի պատմության համակողմանի լուսարանման համար մեծ նշանակություն ունեն Վ. Ջուրովի Կասպիական արշավանքի մասնակից սպաներ Ֆ. Միմոնովիչի, Ն. Դրենյակինի, Պ. Բուսկովի, Ա. Սերեբրովի կատարած հետազոտությունները⁷:

Այսպիսով, XVIII դ. գրավոր սկզբնաղբյուրները հիմնված են դրանց հեղինակների անձնական դիտարկումների, զանազան ճանապարհներով (այդ թվում՝ նաև հետախուզական) ձեռք բերված տեղեկատվության, բանավոր փոխանցված խոսքի վրա⁸, ինչը սակայն չի նվազեցրել սկզբնաղբյուրների գիտական նշանակությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության համար:

XIX դ. առաջին քառորդին ռուսական կովկասյան քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ Կովկասի և նրա ժողովուրդների պատմության համակողմանի ուսումնասիրությունը գիտական նոր աստիճանի վրա է դրվում նախորդ ժամանակաշրջանի սկզբնաղբյուրների ներառմամբ: XIX դ. ուսումնասիրություններից հիշատակության է արժանի 1796 թ. Կասպիական

Ա. Քաղաքական պատմություն, Եր., 1990; Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, Сост. В. Аталиков, Нальчик, 2010, вып. III.

⁵ С. Бурнашев, Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793.

⁶ J. Reineggs and M. Bieberstein, A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, vol. I, London, 1807; Marschall von Bieberstein, Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour, St. Pétersbourg, 1798.

⁷ Ф. Симонович, Описание Южного Дагестана. 1796 г.; Н. Дренякин, Описание Ширвана. 1796 г.; П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; նույնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; А. Ахвердов, Описание Дагестан. 1804 г.; А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958.

⁸ Օրինակ՝ Վ. Ջուրովի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Պ. Բուսկովն իր նամակներից մեկում գրում է, որ ի երջանկություն իրեն հաջողվել է գտնել Ֆաթի Ալի խանի առաջին քարտուղարին, ով տիրապետում է արաբերեն, թուրքերեն ու պարսկերեն լեզուներին և «լավ պատկերացում ունի իր հայրենիքի մասին» (Պ. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева. Москва, 1958, с. 203):

արշավանքի մասնակից Ս. Բրոննսկու արխիվային նյութերի և անձնական դիտարկումների հենքի վրա գրված երկհատոր աշխատությունը⁹: Թեմայի ուսումնասիրության համար ուշադրության է արժանի Օ. Եվեցկու Այսրկովկասի վիճակագրական նկարագրությունը, ուր զետեղված էր նաև Այսրկովկասի XVIII դարավերջի քաղաքական իրադարձություններին նվիրված ընդարձակ հոդվածը¹⁰: Այսրկովկասի և Դաղստանի էթնոքաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության մանրակրկիտ հետազոտություն է իրականացրել տարածաշրջան այցելած արևելագետ Բ. Բերեզինը¹¹:

Կովկասի XVIII դ. քաղաքական պատմության լուսաբանման է նվիրված ակադեմիկոս Պ. Բուսկովի եռհատոր աշխատությունը¹², որի հիմքում դրված են արխիվային մեծաթիվ փաստաթղթեր, վավերագրեր, դիվանագիտական գրագրություններ և արժեքավոր այլ սկզբաղբյուրներ, որոնց մի մասը մեզ չի հասել: XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի ռազմաքաղաքական պատմությունը, Աղա Մուխամմադ խանի Այսրկովկաս կատարած արշավանքն իր արտացոլումն է գտել Ն. Դուբրովինի քառահատոր հետազոտության մեջ¹³: Խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների լուսաբանման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Վ. Պոտտոյի բազմահատոր հետազոտությունը¹⁴: XIX դ. ռուսական կայսերական պատմագիտական միտքը հաճախ կողմնակալ մոտեցում է ցուցաբերում ռուս-իրանա-օսմանյան աշխարհաքաղաքական հակամարտության մեջ այսրկովկասյան խաների ու տիրակալների որդեգրած դիքորոշումների վերաբերյալ:

Հիմնահարցի ուսումնասիրման համար օգտագործել ենք վրացական, թուրքական և պարսկական աղբյուրներից կատարված թարգմանությունները Լ. Մելիքսեթ-Բեկի¹⁵, Ա. Սաֆրաստյանի¹⁶ և Ք. Կոստիկյանի¹⁷ աշխատասիրությամբ և

⁹ С. Броневский, Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, 1823.

¹⁰ О. Евецкий, Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи: Политическое состояние Закавказского края в исходе XVIII в. и сравнение оною с нынешним, СПб., 1835.

¹¹ И. Березин, Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849.

¹² П. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869.

¹³ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886; նույնի՝ Закавказье от 1803 по 1806 гг., СПб., 1866; նույնի՝ Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1867; նույնի՝ Поход графа Зубова в Персию в 1796 г., – «Военный сборник», 1874, № 2-6.

¹⁴ В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887; նույնի՝ Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. В. Потто, Тифлис, 1899.

¹⁵ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հս. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Եր., 1955; Լ. Меликсет-Бехов, Описание сопредельных с Грузиею стран второй половины XVIII века, – Труды Тбилисского государственного университета, т. XVIII, Тбилиси, 1941.

Ջուրթ փաշայի աշխատության հատվածային հրատարակությունը XIX դ. ռուսական մամուլի էջերում¹⁸:

XIX դ. երկրորդ կեսին հրատարակված տպագիր սկզբնաղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Ռուսական կայսրության օրենքների լիակատար ժողովածուն (ПСЗРИ)¹⁹, Հնագրական հանձնաժողովի կողմից 12 հատորով վավերագրերի հրատարակությունը (Ա. Բերժեի խմբագրությամբ)²⁰, Պետական Խորհրդի արխիվի Ա և Բ հատորները²¹ և Ա. Ցագարելի կողմից հրատարակած «Հրովարտակներ»-ի ժողովածուն²²: Կայսերական հրամանագրեր, նամակագրություն և պաշտոնական գրագրություններ են ամփոփված Ռուսական կայսերական պատմական ընկերակցության ժողովածոյի (СИРИО) հատորներում²³:

XVIII դ. հայկական սկզբնաղբյուրներից օգտագործել ենք պատմիչների ու պատմագիրների՝ Եսայի Հասան-Ջալալյանցի, Աբրահամ Երևանցու, Աբրահամ Կրետացու, Միմեոն Երևանցու, Միքայել Չամչյանի աշխատությունները²⁴:

¹⁶ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես պատմական Հայաստանում XVI դ. երկրորդ կեսից), թուրքական պատմագիտությունը սկզբից մինչև XVIII դարի վերջերը, հս. Ա, Կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Եր., 1964:

¹⁷ Ք. Կոստիկյան, Բրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուխամմադ խանի 1795 թ. դարաբաղյան արշավանքի մասին, – «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հս. XXVII, Եր., 2011; Միրզա Յուսուֆ Նեքսեով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Եր., 2000:

¹⁸ Описание событий в Грузии и Черкесии по отношению к Оттоманской империи от 1192 по 1202 г. хиджры (1774-1784), Сочинение Джеведета-паши, Перевод с турецкого с предисловием и примечаниями М. А. Гамазова, – «Русский архив», т. III, Москва, 1888.

¹⁹ Полное Собрание Законов Российской Империи (ПСЗРИ). Собрание первое, 1649-1825 гг., Под ред. М. М. Сперанского, СПб., 1830, т. VII, XXI, XXIII, XXIV, XXV.

²⁰ Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, Под ред. Ад. Берже, Тифлис, 1866-1904.

²¹ Архив Государственного Совета, Под ред. Н. В. Калачова, П. М. фон Кауфмана, И. А. Чистовича, Г. Ф. Штендмана и др., в 5-ти тт., 12-ти чч., СПб., 1869-1904, т. I, Совет в царствование императрицы Екатерины II, 1768-1896 гг., 1869; т. II, Совет в царствование императора Павла I, 1796-1801 гг., 1888.

²² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. А.А. Цагарели, СПб., т. I, 1891; т. II, вып. II, 1902.

²³ Сборник Императорского русского исторического общества, СПб., 1911, т. 27, 1880, т. 42, т. 135, 1885, т. 143.

²⁴ Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868; Ջաւրը, Գիրք որ կըլի յիշատակարան արձանացոյցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Միմեոնէ ցաւահար և վշտակոծ կարօղիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ – Ա. Էջմիածին, 1873; Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թթ.,

Ընդգրկված ժամանակաշրջանի աղբյուրագիտական հարուստ կյուրեր են անխոփված նաև XIX դ. հայ հետազոտողներ Ղ. Ալիշանի, Մ. Սմբատյանցի, Մ. Բարխուտարյանցի երկերում և «Դիւան հայոց պատմութեան» շարքի հատորներում²⁵:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում փաստաթղթային հարուստ կյուրեր են օգտագործել Մ. Ներսիսյանի, Վ. Գամրելեկիի, Վ. Հաջինի, Վ. Մաճարաձեի, Պ. Շաստիսկոյի և Գ. Բուժնույանի խմբագրություններով²⁶ 1950-1990-ական թթ. հրատարակված տպագիր սկզբնաղբյուրների ժողովածուներից:

Խորհրդային տարիներին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի և Ռուսաստանի հարաբերությունների պատմությանը, թեպետև կողմնակալ գնահատականներով, հիմնականում զբաղվել են ռուս և աղբյուրների պատմաբանները: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսաստանի հարաբերությունների XVIII դ.

Պատ. խմբագիր պրոֆ. Մ. Վ. Տեր-Ավետիսյան, Եր., 1938; Աբրահամ կաթողիկոս Կրետացույ, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ - Մ. Էջմիածին, 1870; Միրբայէ Զամբեանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թ.), հտ. Գ, Եր., 1984:

²⁵ Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855; Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ տեառն Մարգսի Մանահնեսայ Զալալեանցի՝ թեմակալ արքեպիսկոպոսի Հայոց Կրաստանի, Իմերլթի և այլոց, մասն Բ, Տիֆլիս, 1858; Մ. Սմբատեանց, Ակարագիր Մուրբ Ստեփաննոսի վանաց Մաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տիֆլիս, 1896; Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893; նույնի՝ Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ-Մ. Էջմիածին, 1902; Դիւան հայոց պատմութեան, հրատարակեց Գիւտ քահ. Աղանեանց, Գիրք Ա-Բ (1780-1834), Թիֆլիս, 1893; Գիրք Գ, մասն Բ, Միմեոն կաթողիկոսի յիշատակարանը (1763-1767), Թիֆլիս, 1894; Գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780-1800), Թիֆլիս, 1899; Գիրք Ը, Միմեոն կաթողիկոսի յիշատակարանը, մասն Բ (1767-1776), Թիֆլիս, 1908; Գիրք Թ, Հովսէփ կաթողիկոս Արղութեան (1778-1800), Թիֆլիս, 1911; Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ դդ.), Թիֆլիս, 1912; Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հտ. Ա (1780-1785), Աշխատասիրութեամբ Վ. Գրիգորյանի, Եր., 1984:

²⁶ Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сборник документов, Под ред. М. Нерсисяна, Ер., 1990, т. IV; Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60 - х-начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. I, Материал подобрал и подготовил к печати В. Гамрекели, Тбилиси, 1980; Русско-дагестанские отношения в XVIII - начале XIX в. Сборник документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988; Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, /В. Мачарадзе, ч. II, Посольство Теймураза II в Россию, Тбилиси, [б. и.], 1968; նույնի՝ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. I, Русско-турецкая война 1768-1774 годов и Грузия, Тбилиси, 1988; նույնի՝ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. II, Тбилиси, 1997; Русско-индийские отношения в XIX в. Сборник архивных документов и материалов, Отв. ред. П. Шаситко, Москва, 1997; Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889; A documentary record. Annotated translation and commentary by George A. Bournoutian, Costa Mesa, 1998.

պատմության առանձին հարցերի լուսարանները անդրադարձել են խորհրդային պատմաբաններ Վ. Լևիատովը²⁷, Օ. Մարկովան²⁸, Գ. Աբդուլլաևը²⁹, Զ. Մուստաֆաևը³⁰:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական պատմությունը որոշ կողմնակալ մեկնաբանություններով է ներկայացված «Աղբյուրների միացումը Ռուսաստանին» ծավալուն աշխատության մեջ: Ըստ նրա՝ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի համար օրինական 1790-ական թթ. պատմական ժամանակաշրջանում խանությունների միակ էջը՝ «փրկությունը», Ռուսաստանին միացումն էր³¹:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական պատմությանը և մասնավորապես XVIII դ. 80-ական թթ. պատմա-քաղաքական իրադարձություններին է անդրադառնում է նաև Ա. Ռ. Հովհաննիսյանը «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դ. 80-ական թվականներին» աշխատության մեջ: Հեղինակն արհիվային և անտիպ այլ սկզբնաղբյուրների հիման վրա լուսարանել է Ռուսաստանի և Այսրկովկասի քաղաքական պատմության մի շարք հիմնահարցեր՝ շեշտը դնելով հայ ազատագրական շարժման պատմության վրա³²:

Թեմայի ուսումնասիրության մի շարք հիմնահարցերի նորովի գնահատմամբ ետխորհրդային տարիների ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել կովկասագետ Վ. Դեզոնի հետազոտությունը³³, որտեղ, թեև հիմնական շեշտը դրվում է Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության վրա, սակայն անդրադարձ է կատարվում նաև Շիրվանի XVIII դ. երկրորդ կեսի պատմության առանձին հարցերին: Ուշադրության արժանի է նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմության բազմախատորյակի XVIII դարն ընդգրկող պրակը Ժ. Անանյանի աշխատասիրությամբ³⁴:

²⁷ В. Левиатов, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948.

²⁸ О. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

²⁹ Г. Абдуллаев, Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII в., Баку, 1958; նույնի՝ Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.

³⁰ Дж. Мустафаев, Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII - начало XIX в.), Баку, 1989.

³¹ Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX - начало XX вв.), Под ред. А. Гулиева, В. Мочалова, Баку, 1955, с. 19.

³² А. Ивоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1947. Տե՛ս նաև թեմայի վերաբերյալ Ա.Ռ. Հովհաննիսյանի մյուս հիմնարար մեկնաբանությունը Իոսիֆ Էմին, Եր., 1945:

³³ В. Дегоев, Большая игра на Кавказе: история и современность. Статьи, очерки, эссе, Москва, 2003.

³⁴ История внешней политики России. XVIII век (от Северной войны до войн России против Наполеона), - История внешней политики России. Конец XV в. - 1917 г., Отв. ред. А.Н. Сахаров, Москва, 1998, с. 150-167. Տե՛ս նաև թեմայի վերաբերյալ Ժ. Անանյանի մյուս արժեքավոր ուսումնասիրությունը՝ Հայ-ռուսական հարաբերությունները, նախադրյալները, փուլերը, պրոբլեմի նկատմամբ մոտեցումները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, № 1, էջ 3-19:

Այսրկովկասի պատմության XVIII դ. երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության հարցում իր ավանդն է ներդրել հայագետ Պ. Չոբանյանը՝ հայ-ուս-վրացական փոխհարաբերությունների պատմության համակողմանի լուսարանմամբ³⁵:

Հայ պատմագիտության մեջ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի առանձին խանությունների XVIII դ. երկրորդ կեսի պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրություններից են Վ. Գրիգորյանի³⁶ և Ս. Մարգարյանի³⁷ հետազոտությունները: Հայկական հարուստ աղբյուրները մանրակրկիտ վերլուծելով՝ Վ. Գրիգորյանը վերականգնում է XVIII դ. 80-90-ական թթ. քաղաքական իրավիճակն Այսրկովկասում: Շաքիի խանության XVIII-XIX դդ. քաղաքական պատմության մի շարք հարցեր խոր քննության են ենթարկվում Ս. Մարգարյանի ուսումնասիրության մեջ:

Ռուսական կայսրության XIX դ. Այսրկովկասում վարչա-տնտեսական քաղաքականության պատմության հիմնահարցերին են նվիրված պատմաբան Վ. Թունյանի արժեքավոր ուսումնասիրությունները³⁸:

XIX դ. Բարվի, նահանգի հայ բնակչության, Բաքու քաղաքի հայության պատմաժողովրդագրական հիմնահարցերին են նվիրված Գ. Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունները³⁹:

Հետազոտության կատարման ընթացքում օգտակար են եղել նաև անգլալեզու գիտական ուսումնասիրությունները⁴⁰:

³⁵ Պ. Չոբանյան, Հայ-ուս-վրացական փոխհարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006; նույնի՝ Հայ-ուս-վրացական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 2:

³⁶ Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958:

³⁷ С. Маргарян, Независимое ханство Шаки в XVIII-XIX вв., – «Caucasica», Труды института политических и социальных исследований черноморско-каспийского региона, т. I, под ред. В. А. Захарова, Москва, Изд-во «Панорама», 2011, с. 27-42.

³⁸ В. Туниан, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье. I пол. XIX в., Ер., 2007.

³⁹ Գ. Ստեփանյան, Բարվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2010; նույնի՝ Բաքու քաղաքի հայության պատմությունը (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:

⁴⁰ G. Hambly, Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty, The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 104-143; J. Perry, Karim Khan Zand (1747-1779), London, Oneworld, 2006; նույնի՝ The Zand Dynasty, The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 63-103; S. Shaw, Iranian relation with the Ottoman empire in the eighteenth and nineteenth centuries, The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 297-313; The Cambridge History of Turkey, vol. III, The Later Ottoman Empire (1603-1839), Edited by Suraiya N. Faroqhi, Cambridge University Press, 2006; R. Tapper, Shāhsevan in Safavid Persia, – «Bulletin of the School of Oriental and African Studies», University of London, vol. 37, № 2, 1974, p. 321-354; նույնի՝ Frontier Nomads of Iran: A Political and Social History of the Shahsevan (Cambridge Middle East Studies), Printed in the United Kingdom at the

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

